**Արձանագրություն N 2**

***2022-2024 թվականների առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ դեղերի (գլիկլազիդ) ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/3/1» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի***

ք. Երևան «06» «Դեկտեմբեր» 2021թ.
ժամը 17:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | Վ. Հակոբյան |
| Հանձնաժողովի անդամներ | Մ. Հարությունյան, Ն. Դանիելյան |
| Հանձնաժողովի քարտուղար | Հ. Սարգսյան |

***1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին***

---

***(Վ. Հակոբյան)***

Ընդունել ի գիտություն, որ 08.11.21թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2021 թվականի նոյեմբերի 23-ին, ժամը 14:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2021 թվականի նոյեմբերի 24-ին ժամը 14:00-ին: 2021 թվականի նոյեմբերի 25-ին ժամը 14:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Կազմակերպության էլ. հասցե | Կազմակերպության ՀՎՀՀ |
|---|---|---|---|
| 1 | «Ջիարջի» ՍՊԸ | garg@mail.ru | 02835324 |
| 2 | «Լե Լաբողատուար Սեղվիե Ս.Ա.Ս» | veligan@mail.ru | FR 08085480796 |
| 3 | «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ | mercado@netsys.am | 00471216 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

***2. Տվյալներ՝ բացված ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին***

---

***(Վ. Հակոբյան)***

Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը: Իսկ մնացած երկու կազմակերպությունների՝ 2-րդ և 3-րդ տեղ զբաղեցրած «Լե Լաբողատուար Սեղվիե Ս.Ա.Ս»-ի և «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի հայտերը մերժել:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:***

***3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին***

---

***(Վ. Հակոբյան)***

Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվեցին անհամապատասխանություններ՝ մասնավորապես սխալ էին նշված ֆիրմային անվանումը և ապրանքային նշանը, արտադրողի անվանման տողի տակ նշված էին արտադրող մի քանի երկրներ և տեխնիկական բնութագրում գնման առարկայի անվանումը նշված էր սխալ՝ մասնավորապես հրավերով պահանջվում էր «Գլիկլազիդ 60մգ» դեղը, բայց հայտով ներկայացված էր «Գլիկլազիդ 30մգ», իսկ տեխնիկական բնութագիրը թերի՝ առանց հավաստելու հրավերով պահանջվող «Դիաբետով պացիենտների բուժումն, իրազեկումը, բուժանձնակազմի կրթումն ու վերապատրաստումը լիարժեք կազմակերպելու համար մատակարարը պայմանագրի շրջանակներում պարտավորվում է անվճար ապահովել նշված ծրագրի իրագործման մասին» (կցվում է): Ուստի գնահատող հանձնաժողովը 25.11.2021թ.-ին որոշեց մեկ օրով կասեցնել հանձնաժողովի նիստը՝ համաձայն հրավերի 8.11 կետի և էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով ծանուցել «Ջիարջի» ՍՊԸ-ին մեկ օրյա ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Համապատասխան ժամկետում «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից համակարգով ուղարկվել է շտկված ապրանքի ամբողջական նկարագիրը, որը հասանելի է եղել էլեկտրոնային աճուրդ համակարգում 27.11.2021թ.-ին երկուշաբթի օրը: Սակայն «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում արտադրողի անվանման դաշտում նշված էին 10-ից ավելի արտադրողներ, իսկ ֆիրմային անվանումը և ապրանքային նշանը չեն շտկվել, այլ լրացված էր մնացել նույնը «Գլիկլազիդ» անունը, որը համարվում է ջեներիկ անվանում, որով պայմանավորված անհնար էր գնահատել ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը, որովհետև նշված չէր կոնկրետ ապրանքային նշանը կամ ֆիրմային անվանումը (կցվում է): Ուստի գնահատող հանձնաժողովը անհնար է գտել 10-ից ավելի առանց տարանջատման նշված անվանումներից առանձնացնել կոնկրետ արտադրողի անվանումը, իր ապրանքային նշանով և ֆիրմային անվանումով արտադրվելիք դեղի տեխնիկական բնութագրով:

Միևնույն ժամանակ հաշվի է առնվել այն փաստը, որ Հայաստանի Հանրապետությունում 06.12.2021թ. դրությամբ պետական գրանցում է ստացած եղել 2 արտադրողի արտադրած դեղերը (կցվում է): Իսկ առաջին տեղ զբաղեցրած «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 10-ից ավելի, առանց տարանջատման անվանումներից գրանցված տարբերակների անունները նշված էին թերի, առանց կոնկրետ ապրանքային նշանի և ֆիրմային անվանման, իսկ մնացածները, որոնք ենթադրվում է, որ հանդիսանում էին չգրանցված դեղերի արտադրողներ, քանի որ նշված չէր

ապրանքային նշանը և ֆիրմային անվանումը, և հայտին կից ներկայացված չէին ՀՀ Կառավարության 2013 թվականի մայիսի 02-ի «ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 502-Ն որոշման պահանջներին բավարարող փաստաթղթերը (որոշման 2.2 կետ), և որը համարվում էր «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/3/1» ծածկագրով գնման ընթացակարգի և հետագայում պայմանագրերի կատարման ընթացքում կիրառվող պահանջ, ուստի անհնար է եղել գնահատող հանձնաժողովի կողմից «Ջիարջի» ՍՊԸ-ի ներկայացրած ապրանքի ամբողջական նկարագրի՝ տեխնիկական բնութագրի գնահատումը:

Եվ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել առաջին տեղ զբաղեցրած՝ «Ջիարջի» ՍՊԸ-ի հայտը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### *4. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին*

---

***(Վ. Հակոբյան)***

25.11.2021թ.-ին ֆինանսների նախարարություն է դիմել «Լե Լաբողատուար Սեղվիե» Ս.Ա.Ս-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) գործադիր տնօրեն Ֆիլիպ Մալեն, առ այն, որ հակադարձ աճուրդի ժամանակ 24.11.2021թ. ժամը 14:22:47-ից սկսած էլեկտրոնային աճուրդի խափանման մասին ծանուցելու նպատակով և Կազմակերպության հետագա քայլերի սահմանափակման մասին: Ի դեպ նույն խափանումը նկատել է նաև «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/3/1» ծածկագրով գնման ընթացակարգի քարտուղարը՝ հակադարձ աճուրդի ընթացքին հետևելու ժամանակ: Սակայն ֆինանսների նախարարի տեղակալի գրությամբ հայտնել են, որ իրենք Կազմակերպության բարձրաձայնված խնդրի վերաբերյալ դիմել են համակարգի տեխնիկական սպասարկումը իրականացնող կազմակերպությանը, իսկ վերջինս պատասխանել է, որ նշված ժամանակահատվածում իրենք չեն արձանագրել էլեկտրոնային աճուրդ համակարգի խափանում (գրությունը կցվում է):

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### *5. Ընթացակարգի ամփոփման մասին*

---

***(Վ. Հակոբյան)***

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ մերժել առաջին տեղ զբաղեցրած «Ջիարջի» ՍՊԸ-ի հայտը և «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/3/1» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել

չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի հիմքերով:

Միաժամանակ որոշվեց 2022-2024 թվականի կարիքների համար դեղի (գլիկլազիդ) ձեռք բերման նպատակով վերահայտարարել գնման ընթացակարգը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Վ. Հակոբյան

Անդամներ՝ ---------- Մ. Հարությունյան

---------- Ն. Դանիելյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան

# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՁԻԱՐՁԻ ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/3/1 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | գլիկլազիդ | գլիկլազիդ | Չինաստան<br>Հնդկաստան<br>Ռուսաստան<br>Ուկրաիանա<br>Բելառուսիա | Գլիկլազիդ 30 մգ դեղահատեր կարգավորվող ձերբազատմամբ: Հայաստանի Հանրապետության ռեզիդենդ չհանդիսացող կազմակերպությունները պարտավոր են |

# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՋԻԱՐՋԻ ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/3/1 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Գլիկլազիդ | Գլիկլազիդ | Ակտավիս Վոկհարդ Ալտեռ Ռանբաքսի Ինսեպտա Անֆարմ Բորիսովսկի Սիկլում Կանոնֆարմա Դելֆարմա Դի Օ Սի Գեներիցի Եուրոջեներիցի Ֆորֆարմ Ջեներիկ Ֆարմասյութիքա Ջի Էմ Ֆարմասյութիքալս Ինֆարմ ԿՌԿԱ Լաբ Շտադա Լաբ Բազի | Գլիկլազիդ 60 մգ դեղահատեր կարգավորվող ձերբազատմամբ: Հայաստանի Հանրապետության ռեզիդենդ չհանդիսացող կազմակերպությունները պարտավոր են մատակարարումն իրականացնել ք.Երևան, Տիտոգրադյան 14/10 հասցեով դիդիփի ինկոտերմսի (DDP Incoterms) պահանջներին համապատասխան: Սույն գնման ընթացակարգի և պայմանագրերի կատարման ընթացքում կիրառվում են ՀՀ Կառավարության 2013 թվականի մայիսի 02-ի «ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 502-Ն որոշման պահանջները: 2. Դիաբետով պացենտների բուժումն, իրազեկումը, բուժանձնակազմի կրթումն ու վերապատրաստումը լիարժեք կազմակերպելու համար |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | Ամբիրել Լաբ Սինֆա Լաբ Կոմբիքս Նորմոն Լաբ Վիտորիա Սերվյե Լուպին Օպսոնին Մեդիկա Մոլտենի Մայլան Պենսա Ռատիոֆարմ Սանդոզ Սիա Ինգեն Սան Ֆարմ Սիմֆար ՏԱԴ Ֆարմ Տեվա Յու Էյ Բի Իդեալ Յուքսա Ֆարմ Վին Մեդիկա Վոերվագ ֆարմ Զենտիվա Օրիոն Բալ Ֆարմ | Մատակարարը պայմանագրի շրջանակներում պարտավորվում է անվճար ապահովել՝ 3. Գիտակրթական ծրագրեր Երևանում և ՀՀ մարզերում ներգրավելով՝ հետևյալ մանակիցներին՝ 1) Ներզատաբաններ- շուրջ 150 մասնակից 2) Ընտանեկան բժիշկներ- 1000 մասնակից 3) Բուժքույրեր-280 մասնակից 4. Տարեկան առնվազն մեկ անգամ գիտական կոնֆերանսների կազմակերպում՝ նախատեսված 1) Ներզատաբաններ-150 մասնակից 2) Ընտանեկան բժիշկներ և թերապևտներ- 600-1800 մասնակից 5.Ներզատաբանների վերապատրաստում արտերկրում՝ տարեկան առնվազն 3-4 մասնագետ 6. Հանրամատչելի ուսուցողական տպագրված և էլեկտրոնային նյութերի պատրաստում՝ 1) Բժիշկներ-5000 մասնակից 2) Բուժքույրեր-5000 մասնակից 3) Հիվանդներ-100.000 մասնակից 7. Սկրինինգային ծրագրեր՝ միտված 1) Նախադիաբետի, 2) Մետաբոլիկ համախտանիշի, 3) Սրտանոթային ռիսկերի, 4) Ճարպակալման վաղ հայտնաբերմանը: 8. Շաքարային դիաբետի դպրոցների հիմնում՝ Երևանում և ՀՀ մարզերում; 9. Կատարված աշխատանքների վերաբերյալ եռամսյակային կտրվածքով հաշվետվությունների ներկայացում ՀՀ առողջապահության նախարարություն: 10. Ծրագիրը հանդիսանում է պարտադիր պայման չափաբաժնի կատարման համար: |

# Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն

գլիկլազիդ

Search In Generic name Հայերեն New search Login

| N | Անվանումը | Ակտիվ բաղադրատարրերը | Դեղաձևը | Դեղաչափը և թողարկման ձևը | Երկիրը | Արտադրողը | Գրանցված է մինչև | Բաց թողնման կարգը | Հսկվող | Արտադրողի երկրի անդամակցությունը | Images view | 3D object view |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գլյուկոտոն ՄՌ | գլիկլազիդ | դեղահատեր կարգավորվող ձերբազատմամբ | 30մգ; (30/3x10/) բլիստերում | Վրաստան | ԳՄ Ֆարմայուտիկալս ՍՊԸ, ՊՍՊ գրուպ 65, Քվեմո Ֆոնիչալա փ., Թբիլիսի | 16.12.2021 | Դեղատոմսով | - | | Images View | 3D VIEW |
| 2 | Գլիկլազիդ ՄՌ | գլիկլազիդ | դեղահատեր կարգավորվող ձերբազատմամբ | 30մգ; (60/6x10/) բլիստերում | Բելառուս | «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ, 64ա, No4, Չապաեվ փ., Բորիսով, Մինսկ շրջան, «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ, 64, Չապաեվ փ., Բորիսով, Մինսկ շրջան (Բելառուս)-ի համար | 24.12.2023 | Դեղատոմսով | - | ԵԱՏՄ | Images View | 3D VIEW |
| 3 | Դիաբետոն ՄՌ | գլիկլազիդ | √ դեղահատեր կարգավորվող ձերբազատմամբ | 60մգ; (30/2x15/) բլիստերում | Ֆրանսիա | Լես Լաբորատոիրես Սերվիե Ինդաստրի, 905, Սարան 6., 45520 Ժիդի՝ Լես Լաբորատոիրես Սերվիե, 50, Կարնո փ., 92284 Սուրեն սեդեքս (Ֆրանսիա)-ի համար | 16.10.2025 | Դեղատոմսով | - | ԴՏՀ/Ս | Images View | 3D VIEW |
| 4 | Գլիկլազիդ Կանոն | գլիկլազիդ | √ դեղահատեր երկարատև ձերբազատմամբ | 60մգ; (30/3x10/) և (30/2x15/) բլիստերում | Ռուսաստան | Կանոնֆարմա պրոդակշն ՓԲԸ, 105, Զարեչնայա փողոց, Սչելկովո քաղաք, Սչելկովո շրջան, Մոսկվայի շրջան, 141100 | 13.12.2022 | Դեղատոմսով | - | ԵԱՏՄ | Images View | 3D VIEW |

| N | Անվանումը | Ակտիվ բաղադրատարրերը | Դեղաձևը | Դեղաչափը և թողարկման ձևը | Երկիրը | Արտադրողը | Գրանցված է մինչև | Բաց թողնման կարգը | Հսկվող | Արտադրողի երկրի անդամակցությունը | Images view | 3D object view |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | Գյուկոտոն ՄՌ | գլիկլազիդ | դեղահատեր կարգավորվող ձերբազատմամբ | 30մգ; (30/3x10/) բլիստերում | Վրաստան | ԳՄ Ֆարմայուտիկալս ՍՊԸ, 65, Քվեմո Ֆոնիչալա փ., 0165 Թբիլիսի | 17.12.2026 | Դեղատոմսով | - | | Images View | 3D VIEW |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am

Հեռ.՝ (+374 11) 800 156, Ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

02.12.2021/ե
26/26-1/15745-2021

«ԼԵ ԼԱԲՈՂԱՏՈՒԱՂ ՍԵՂՎԻԵ» Ս.Ա.Ս-Ի
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ ՖԻԼԻՊ ՄԱԼԵԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

*25/11/2021թ. գրության վերաբերյալ*

Հարգելի Ֆիլիպ Մալե

Հայտնում ենք, որ «Լե Լաբողատուաղ Սեղվիե» Ս.Ա.Ս-ի բարձրացրած խնդրի կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը:

Վերջինս տեղեկացրել է, որ 24/11/2021թ. էլեկտրոնային աճուրդների համակարգում խափանումներ չեն գրանցվել:

Տեղեկացնում ենք նաև, որ գրությամբ ներկայացրած հակադարձ աճուրդի մեկնարկի ժամը 14:00-ից մինչև ժամը 14:30-ն ընկած ժամանակահատվածում համակարգում առանց խոչընդոտների ընթացել են ևս երեք ընթացակարգերի թվով 14 չափաբաժինների մասով աճուրդներ:

Հայտնում ենք նաև, որ հիշյալ հակադարձ աճուրդին վերջին գնառաջարկ ներկայացնելու պահից՝ ժամը 14:17:47-ից մինչև ժամը 14:22:47-ը, մասնավորապես՝ Ձեր դիտարկմամբ աճուրդի գործընթացի կանգի պահից՝ ժամը 14:21:15-ից հետո ժամը 14:21:53-ին, ժամը 14:22:16-ին, ժամը 14:22:17-ին, ժամը 14:22:33-ին և ժամը 14:22:40-ին համակարգում հնարավոր է եղել տրամադրել նոր գնառաջարկներ, ինչպես դա իրականացվել է ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-ԻԿ-22/1 ծածկագրով ընթացակարգի աճուրդի ընթացքում, որի մասին տեղեկատվությունն առկա է համակարգի հանրային բաժնում (հանրային բաժնի արտատպվածքը և տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպության պատասխանը կցվում են):

Միաժամանակ հայտնում ենք, որ համակարգում իրականացվող աճուրդային գործընթացները ժամանակի կոնկրետ հատվածների համար ընթանում եմ ավտոմատ եղանակով և խնդիր առաջանալու դեպքում այն տարածվում է բոլոր աճուրդների վրա:

Առդիր՝ 1 ֆայլ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Recoverable Signature

X

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN AVAG 2003930574

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Կատարող Ն. Մուրադյան.
Հեռ. 011289328